Մինասյան Էդիկ, Վարդանյան Արարատ, Հարությունյան Վրեժ, Հայրապետյան Էլլադա
«Արցախ-Սփյուռք առնչությունները XX դարավերջին և XXI դարասկզբին»: Կոլեկտիվ մենագրություն: Երևան, ԵՊՀ հրատ., 2022, 272 էջ:

Կոլեկտիվ մենագրությունը ներկայացնում է Արցախի Հանրապետության կառավարության հաստատած և գիտական կենտրոնում իրականացրած «Արցախ-Սփյուռք առնչությունները XX դարավերջին և XXI դարասկզբին» գիտական թեմայի հետազոտության արդյունքները:



Հեղինակների կողմից համալիր պատմաքննության ենթարկված թեման հույժ արդիական հնչեղություն ունի, քանզի Արցախ-Սփյուռք հարաբերությունները գերակա նշանակություն ունեն թե՛ Արցախի, և թե՛ Հայաստանի անվտանգային շահերի ապահովման առումով, որում հայկական Սփյուռքը մեծ կարևորություն և դերակատարում ունի:

Հեղինակների կողմից հետազոտված ժամանակաշրջանում Արցախի Հանրապետությունը և Սփյուռքի հայկական կենտրոններն ավելի ուժեղ դիրքեր ունեին միջազգային հարաբերությունների հարթակում, քան՝ ներկայիս փուլում: Այդ հանգամանքն էլ պայմանավորեց էական հաջողությունները Արցախ-Սփյուռք հարաբերությունների համատեքստում: Այն որոշակի վստահություն ներշնչեց թե՛ Արցախի Հանրապետությանը, թե՛ Սփյուռքին բազմաբնույթ ձեռնարկներում՝ արտաքին-քաղաքական հարաբերությունների, մշակութային-տնտեսական և այլ ոլորտներում: Հեղինակները հանգամանալից վերհանել են այն պոզիտիվը, որ երկուստեք կար Արցախ-Սփյուռք հարաբերություններում:

Հեղինակներն ըստ ամենայնի Արցախ-Սփյուռք հարաբերությունների զարգացման ու ամրապնդման գործում կարևորել են 1999 թվականից սկսած պարբերաբար Հայաստան-Սփյուռք համաժողովների՝ 2002, 2006, 2011, 2014 և 2017 թթ. անցկացումը, ինչպես նաև՝ մինչ այդ առկա գաղափարաբանական հակասությունների և տարակարծությունների հաղթահարումը ՀՀ-ում իշխող կուսակցության ու Սփյուռքի ազգային կազմակերպությունների միջև, ինչը զգալի չափով նպաստեց հետագա առաջընթացին:

Բացի դրանից, սույն կոլեկտիվ մենագրությունում, Արցախի Հանրապետություն-Սփյուռք հարաբերությունների համատեքստում, ըստ ամենայնի արժևորվել են 1998-2008 թթ. շրջափուլում մեծ ոգևորություն առաջացրած հայրենիքում համահայկական խաղերի պարբերաբար կազմակերպումը (1999, 2001, 2003, 2007, 2011, 2015, 2017 թթ.), որոնք էլ ավելի բարձր որակ հաղորդեցին այդ հարաբերությունների բովանդակությանը: Հեղինակները կարևորել են նման միջոցառումների նշանակությունն Արցախի և Սփյուռքի հայության համախմբման գործում, այդ մեծ ներուժի նպատակամղմանը՝ առհասարակ հայության առջև կանգնած մարտահրավերներին դիմագրավելու առումով:

Այդ մեկնակետից է գնահատվել նաև Հայրենիք-Սփյուռք և Արցախ-Սփյուռք սոցիալական, մշակութային կապերի ու առնչությունների զարգացմանը մեծապես նպաստած մշակութային փառատոնների պարբերաբար անցկացումը, ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման աշխատանքները, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների տպագրումն ու առաքումը Սփյուռք և այլն: Այս նույն համատեքստում էլ հեղինակների կողմից զգալի տեղ է հատկացվել բարեգործական կազմակերպությունների, կառույցների, միությունների հայրենավեր գործունեության բացահայտմանը, որոնք, էլ ավելի ընդլայնեցին իրենց գործունեության շրջանակները՝ հպարտության զգացում ապրելով ձեռք բերված արդյունքներից, շոշափելիորեն իրենց թիկունքում զգալով հայկական պետականության լայն աջակցությունը: Ինչն էլ, ըստ հեղինակների, էապես նպաստեց, որ բազմաթիվ սփյուռքահայ կազմակերպությունները բազմապատկեն գործուն ջանքերը տարբեր ուղղություններով՝ և միտված Արցախի շենացմանը և հզորացմանը: Հենց այդ դիտանկյունից էլ հեղինակները վերհանել են 1992 թ. ստեղծված «Հայաստան» համահայկական հիմնադրամի ու համահայկական, համասփյուռքյան այլ ներդրումներ կատարած հաստատությունների ու բարեգործական կազմակերպությունների ու կառույցների, այդ թվում՝ Ք. Քրքորյանի կողմից հիմնված «Լինսի» հիմնադրամի, «Հայկական բարեգործական ընդհանուր միության» (ՀԲԸՄ), «Միացյալ հայկական ֆոնդ» բարեգործական կազմակերպության, «Հովարդ Կարագյուզյան» բարեգործական հասարակական կազմակերպության, ՀՕՄ-ի, ՀՕՖ-ի և այլ սփյուռքյան կազմակերպությունների բազմաբնույթ գործունեությունը՝ նրանց ներդրումը Արցախի տնտեսության վերականգնման ու ձեռնարկատիրության զարգացման գործում, միաժամանակ կարևոր եզրահանգման գալով, որ ոչ պատահաբար այդ տարիներին Արցախի Հանրապետության տնտեսության մեջ ներդրումներ կատարած օտարերկրյա ներդրողների շուրջ 69 %-ը եղել են սփյուռքահայեր:

Միաժամանակ, սույն հույժ արժեքավոր աշխատանքի հեղինակներն իրատեսական եզրահանգման են հանգել. XX դարավերջին Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անկախության վերականգնումը և հայկական երկու հանրապետությունների՝ Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության ստեղծումը, հիրավի, շրջադարձային իրողություն էր հայ ժողովրդի նորագույն պատմափուլում, անանց դարակազմիկ մի իրադարձություն, որը կարևոր նշանակություն ձեռք բերեց ներկայիս համաշխարհայնացման գործընթացներում: 1991 թ. ԽՍՀՄ փլուզումը, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը և պետականության վերականգնումը, պետականաշինության գործընթացները (1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագրով և այն ամրագրած 1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեով) և Արցախի Հանրապետության անկախության հռչակումը (1991 թ. սեպտեմբերի 2-ին), մայր Հայրենիքի հետ վերամիավորման գործընթացներն արժեքային մեկնակետից միանգամայն նոր պատմափուլ սկզբնավորեցին Հայաստան-Սփյուռք-Արցախ առնչություններում, որոնք ընդգրկեցին կյանքի բոլոր ոլորտները՝ հասարակական, քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական: ԽՍՀՄ կազմալուծման հետևանքով սկսված անկախացման գործընթացներում անանց արժեք ունեցան համաժողովրդական գործընթացները Ղարաբաղ-Արցախում, որում արցախահայությունը մեծ ջանք և կենսական էներգիա ներդրեց՝ սկսված գործընթացների անշրջելիությունն ապահովելու համար, ինչը պատմաքաղաքական իրադարձությունների անն-

պաստ ընթացքի հետևանքով անիրագործելի էր դարձել թե՛ առաջին, թե՛ երկրորդ հանրապետությունների գոյության ժամանակափուլում:

Մենագրության հեղինակներն ըստ ամենայնի արժևորել են նաև այն էական հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ ավելի խորացավ և նպատակային դարձավ, երբ 2008 թ.ստեղծվեց ՀՀ սփյուռքի նախարարությունը, որով ՀՀ-Սփյուռք և Արցախ-Սփյուռք հարաբերությունները դրվեցին անհամեմատ ավելի բարձր պետաքաղաքական և գիտակցական մակարդակի վրա, նպաստելով Սփյուռքում համազգային ներուժի համախմբմանը համազգային խնդիրների լուծման գործում, այդ թվում՝ արցախյան հիմնախնդրի շուրջ, մշակելու ու ներդնելու հայրենադարձությունը խթանող կառուցակարգը:

Հեղինակների սույն մեծարժեք աշխատանքն ակնհայտորեն վկայում է, որ թե՛ Արցախը և թե՛ հայկական Սփյուռքն այն կենսական մեծ կարևորության, անփոխարինելի գարկերակներն են, որոնցից է կախված Հայաստանի Հանրապետության բարօրությունը, անվտանգային շահերի ապահովումը և անշուշտ, կառուցողական դերը անդրկովկասյան տարածաշրջանում և դրա շուրջ: Այս գործոններն էլ էապես պայմանավորեցին ողջ Սփյուռքի ակտիվ մասնակցությունն Արցախի շինարարությանը և հայկական երկրորդ պետականության հզորացմանը նշված ժամանակահատվածում, ինչը չի կարելի ասել արցախյան ոդիսական ներկայիս դժվարին ու ողբերգական ժամանակափուլի պատմաընթացքի մասին: Հետևապես, հեղինակներին հաջողվել է ստեղծել փաստառատ մի մնայուն աշխատանք, որում հենց համակողմանի արժևորվել է Արցախի Հանրապետության և հայկական Սփյուռքի շահագրգիռ փոխհամագործակցությունը: Ըստ այդմ, դիտարժան օրինակներով պատմաքննվել է այն անխոնջ աշխատանքը, որ տարվել է հայ ավանդական քաղաքական ուժերի, տարբեր հասարակական կազմակերպությունների, անհատ նվիրյալների և այլ ուժերի կողմից պահպանելու և զորացնելու այն ամրակուռ կամուրջը, որը հաջողվեց պահպանել այդ տարիներին:

Մենագրությունն անհերքելի փաստերի հիման վրա վկայում է նաև, որ Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ զուրկ են որևիցե պատմական հիմքերից, քանի որ վերջինս երբևէ չի եղել անկախ Ադրբեջանի մաս: Հեղինակների փաստական հիմնավոր հիմք ունեցող այս աշխատանքում նաև բացահայտված է, որ շատ տարիներ շարունակ միջազգայնորեն ճանաչված ազգերի ինքնորոշման իրավունքից օգտվելու՝ արցախահայության բոլոր խաղաղ նախաձեռնություններին և հիմնարար առաջարկներին ի պատասխան՝ Ադրբեջանը կիրառել է բռնություններ, ազգասպան գործողություններ, ոտնահարել հայ բնակչության մարդկային և լեգիտիմ իրավունքներն ու շահերը: Ադրբեջանի իրավազուրկ հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ բացարձակապես չունեն նաև բարոյական հիմքեր: Այսպիսով՝ ըստ հեղինակային կոլեկտիվի աներկբա հետևության, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշումն իրականացվում է մի տարածքի վրա, որի նկատմամբ Ադրբեջանն իրավական, պատմական և բարոյական հավակնություններ ունենալ չի կարող, ինչը նաև միջազգային իրավունքի հիմնարար դրույթների անտեսում է:

Կոլեկտիվ մենագրության արժանիքներից է նաև այն, որ աշխատանքում փաստական հարուստ նյութերի համադրական-քննական վերլուծությամբ ըստ արժանվույն ցույց են տրված սփյուռքահայ բարերարների ու բարեգործական կազմակերպությունն-

ների, համահայկական հիմնադրամների լայնածավալ գործունեությունն ու լուրջ ներդրումները XX դարավերջին և XXI դարասկզբի երկու տասնամյակներում՝ Արցախի տնտեսական և մշակութային ոլորտների զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրերի իրականացման գործում: Մենագրության հեղինակների կողմից փաստացի արժևորվել են կրթության, առողջապահության, մշակույթի, բնակարանաշինության, ճանապարհաշինության, դպրոցաշինության, սոցիալական աջակցության և տնտեսության տարբեր բնագավառների զարգացման ուղղությամբ կատարված ներդրումներն ու համակողմանի աշխատանքները, որոնց շնորհիվ ազատագրված ու անկախ հռչակված Արցախի Հանրապետությունը կայունացրեց իր վիճակը:

Հեղինակներն աշխատանքում գալիս են արդարացի և սկզբունքային եզրահանգման. Արցախ-Սփյուռք հարաբերությունները հայկական երկրորդ պետության բնականոն ընթացքը խաթարվեց և բռնի ընդհատվեց 2020 թ. 44-օրյա թուրք-ադրբեջանական ագրեսիայի ու սանձազերծած աղետալի պատերազմի, նրա կապիտուլացիայի արդյունքում, որը ոչ միայն մեր բնակչությունից խլեց մեծ թվով մարդկային կյանքեր, այլև զգալի տարածքներ՝ շուրջ 75 %-ը: Մենագրությամբ բերված փաստերի համաձայն, ըստ էության, 1991-1994 թթ. ազատագրված տարածքներում (7 շրջան) նաև Շուշիում ու Հադրութում սփյուռքահայ բարերարների ու բարեգործական կազմակերպությունների, ՀՀ-ի ու Արցախի կառավարության կատարած ներդրումներն ու մեծածավալ աշխատանքներն ի չիք դարձան: Պատերազմի կապիտուլացիոն արդյունքները զրոյականացրին դժվարությամբ ձեռք բերված նվաճումները: Եվ դեռ ավելին, հեղինակների միանշանակ կարծիքով, Ադրբեջանը ոչ միայն փորձում է ամրագրել իր «նվաճումները», այլև՝ հաղթողի հոգեբանությամբ և «իրավունքով» կոպտաբար և նենգաբար խախտում է ՀՀ պետական սահմանները՝ էական սպառնալիք դառնալով ՀՀ տարածքային ամբողջականության ու անվտանգության ապահովման առումով:

Գիրքը նաև փաստում է, թե ինչ դերակատարում ունեն հայկական Սփյուռքը և Արցախը Հայոց հետագա ճակատագրաբանթացքում, խորապես ըմբռնելու, որ առանց այդ կապերի ամրապնդման հնարավոր չէ ունենալ կենսունակ, զոյատևման ընդունակ և ուժեղ Մայրահայաստան:

Հեղինակների աշխատանքը գրված է նվիրումով, դրանում արծարծված հարցախումբը միտված է ապագային և դրանում Հայոց հեռանկարների ճիշտ ընկալմանը:

Սույն միանգամայն արժեքավոր կոլեկտիվ մենագրությունը կարող է սեղանի գիրք դառնալ Հայաստանի, Արցախի և հայկական Սփյուռքի ընթերցող լայն հասարակության, մասնագետների, գիտության տարբեր բնագավառները ներկայացնող գիտնականների համար:

Պատմ. գիտ. դոկտոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր՝ Վանիկ Հրանտի Վիրաբյան